

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԸ (1173—1973)

Այս տարի օգոստոսի 13-ին լրանում է սուրբ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը:

Հիշարժան այս տարեթվի առթիվ 1973 թվականի հունվար 16 թվակիր Իր գրած սրբատառ կոնդակում Վեհափառ Հայրապետը, նշելով սուրբ Ներսես Շնորհալու պատմական դերն ու տեղը ԺԲ դարի մեր եկեղեցական տարեգրության և հայ մշակույթի պատմության մեջ որպես Հայրապետ Հայոց և մեծավաստակ մատենագիր, արդարորեն հաստատում էր, որ ԺԲ դարը առանց Ներսես Շնորհալու անվան ու վաստակի «պիտի մերկանար... իր փառքից»:

Արդարև, Շնորհալին, ինչպես նրան բնութագրել է ԺԳ դարի հայրենասեր պատմիչ Կիրակոս վարդապետ Գանձակեցին, «առաւելեալ էր իմաստութեամբ քան զյոլովս ի ժամանակի անդ, ո՛չ միայն քան զվարդապետս հայոց, այլև քան զՅունաց և զԱսորուց, այնքան՝ մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս»:

Հայրապետական կոնդակը 1973 թվականը հայտարարում էր հոբելյանական տարի և հրահանգում՝ մեծաշուք հանդիսություններով, բովանդակալից, գիտական ուսումնասիրություններով և հոդվածներով ոգեկոչել պայծառ անունը, խնկելի հիշատակն ու մատենագրական բազմաժանր վաստակը հայ եկեղեցու մեծագույն սրբի և եռամեծ Հայրապետի՝ նրա մահվան 800-ամյակի առիթով:

Հայրապետական բարեհաճ կարգադրությամբ կազմվել է հոբելյանական հանձնաժողով Մայր Աթոռում (տես «Էջմիածին» ամսագիր, 1973 թվականի փետրվար, էջ 18), որի վրա պարտականություն է դրվել հոբելյանական հանդիսությունների կազմակերպումն ու անցկացումը առաջիկա աշնանը:

«Էջմիածին» ամսագիրը ս. Ներսես Շնորհալու հիշատակին, կյանքին, եկեղեցական, մատենագրական ու հայրենասիրական գործունեությանն է նվիրելու բացառիկ մի համար, իսկ Մայր Աթոռի՝ Հայաստանյայց եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների բաժինն այս առթիվ հրատարակելու է օտար լեզվով մի ուսումնասիրություն Շնորհալուն նվիրված:

Ս. Ներսես Շնորհալին թողել է բազմաժանր, հարուստ մատենագրական ժառանգություն, որն անկողոպտելի փառքն է կազմում մեր մշակույթի պատմության:

«Էջմիածին» ամսագրի սույն համարում մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Շնորհալու հոգևոր բանաստեղծության գեղեցիկ գանձերից մեկը՝ «Աշխարհ ամենայն»-ը, որն աշխարհաբարի է վերածել տ. Եղիշե եպիսկոպոս Դուրյանը (տես «Լոյս» կրոնական շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1905 թ., էջ 206):

Ամսագրի հաջորդ համարներում քաղվածաբար կհրատարակվեն ս. Ներսես Շնորհալու արձակ և չափածո ստեղծագործություններից այլ հատվածներ: